ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 65/09

Քաղ. Երևան 29 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն հ.72/3) քննարկեց Մեծ Բրիտանիայի Դաք ընդ Քավըր Քլոուսինգ Լիմիթիդ (այսուհետ՝ նաև Duck and Cover Clothing Limited (GB)) ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2009թ. մայիսի 11-ի բողոքը (մտից հ.320, 11.05.2009թ.)՝ IR 870734 միջազգային գրանցմամբ «Duck and Cover» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) 2008թ. նոյեմբերի 10-ի կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. նոյեմբերի 10-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15-րդ կետի 2-րդ և 93-րդ կետի 2-րդ ենթակետերի, ինչպես նաև 98-րդ կետի և 103-րդ կետի 6-9 ենթակետերի համաձայն՝ «Duck and Cover» ապրանքային նշանի IR 870734 միջազգային գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ԱԾՄԴ 25-րդ դասում նշված բոլոր ապրանքների նկատմամբ 2007թ. հոկտեմբերի 10-ի նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ շփոթելու աստիճան նման թուրքական Վոլգյորեն Տեքստիլ Ինշաաթ Գիդա Տիջարեթ վե Սանայի Լիմիթիդ Շիրքեթի (այսուհետ՝ նայև VOLGƏREN TEKSTƟL INŞAAT GIDA TƟCARET VE

SANAY LȯMȯTED ŞȯRKETȯ (TR)) ընկերության անունով գրանցված «DC DUCK AND COVER» (IR860239) ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքարկողը՝ իր անհամաձայնությունը հայտնելով փորձաքննության որոշմանը, բողոքում ներկայացրել է մի շարք փաստարկներ՝ հօգուտ «Duck and Cover» IR 870734 միջազգային գրանցման տարածմանը Հայաստանում:

Մասնավորապես, բողոքարկողը նշում է, որ հայտատուն՝ Duck and Cover Clothing Limited (GB) ընկերությունը, հանդիսանում է հագուստի և կոշիկի հայտնի արտադրող, որն իր գործունեությունը սկսել է դեռևս 1996թ., որպես ոչ մեծ ընկերություն, իսկ այսօր, արդեն ձևավավորելով ամենօրյա ոճի հագուստի սեփական, միայն իրեն բնորոշ ուղղվածություն, մեծ համբավ է վայելում ինչպես Մեծ Բրիտանիայում, այնպես էլ աշխարհի շատ այլ երկրների երիտասրդ սպառողների զանգվածի շրջանակներում: Հայտատուի արտադրանքը իրացվում է “Duck and Cover” խոշոր ֆիրմային խանութներում վաճառքի միջոցով:

Բողոքարկողը նշում է նաև, որ Duck and Cover Clothing Limited ընկերությունը վարում է հասարակական կարծիքի ձևավորման լայնածավալ կամպանիա՝ ներկայացնելով իր արտադրանքը այնպիսի հեղինակավոր պարբերական հրատարակություններում, ինչպիսիք են “FHM – for him magazine”, “Drapers”, “Jack”, “Front”, “MWB – menswear buyer”, “Men’s Health”, “OM – the observe magazine”, “snoop”, “MAXIM”, “Esquire”: Համաշխարհային շուկայում Duck and Cover Clothing Limited ընկերության ապրանքային նշանների առաջխաղացման յուրահատկություններից մեկն է հանդիսանում հայտատուի մասշտաբային գովազդային կամպանիան, որն իր մեջ ներառում է մարզադաշտերում գովազդային վահանակների լրացնելը, օրինակ՝ ֆուտբոլի դաշտերի ցանկապատերի վրա:

Բողոքարկողը կարևորում է այն հանգամանքը, որ Duck and Cover Clothing Limited ընկերությունը՝ սկսած 1995 թվականից, իրականացնում է իր հիմնական ապրանքային նշանների (որոնց թվում է նաև IR 870734 միջազգային գրանցմամբ «Duck and Cover» ապրանքային նշանը), գրանցման գործընթացը, ընդ որում, հաշվի առնելով, որ նշանները հայտատուի կողմից օգտագործվում են ինչպես առանձին, այնպես էլ տարբեր համակցություններում, դրանց պաշտպանվածության աստիճանի բարձրացման նպատակով յուրաքանչյուր նշան գրանցման է ներկայացվել առանձին: Այսօրվա դրությամբ Duck and Cover Clothing Limited ընկերության ապրանքային նշանները մի մասը արդեն գրանցված է աշխարհի ավելի քան 30 երկրներում, հիմնականում՝ Եվրոպայում, իս մյուսը գտնվում է գրանցման տարբեր փուլերում:

Ինչ վերաբերում է հակադրված «DC Duck and Cover» IR860239 միջազգային գրանցմաբ նշանին, որը գրանցվել է Վոլգյորեն Տեքստիլ Ինշաաթ Գիդա Տիջարեթ վե Սանաի Լիմիթիդ Շիրքեթի թուրքական ընկերության անունով աշխարհի շատ երկրներում,

ապա բողոքարկողը նշում է, որ այդ նշանը հանդիսանում է Duck and Cover Clothing Limited (GB) ընկերության երկու առավել հայտնի ապրանքային նշանների համակցություն և, ընդհանուր առմամբ, նմանեցում: Բողոքարկողի համոզմամբ, հակադրված նշանում հայտատուի սեփական մշակումներ ու լոգոտիպեր հանդիսացող հայտնի տարրերի վերարտադրումը և տվյալ նշանի հետագա գրանցումը ապացուցում են թուրքական ընկերության գիտակցված միտումը՝ իր շահերի համար օգտագործել Duck and Cover Clothing Limited ընկերության (GB) երկարատև գործունեության ընթացքում ձեռք բերված անունն ու համբավը, ինչպես նաև միջազգային մակարդակով ճանաչումը: Նման հանգամանքներն, անկասկած, ապացուցում են թուրքական ընկերության կողմից շուկայական գործունեության վարման նորմերի կոպիտ խախտում, ինչը խոչընդոտում է հայտատուի բարեխիղճ գործունեությանը և կարող է սպառողներին մոլորության մեջ է գցել ապրանքների արտադրողի հարցում:

Բողոքարկողը նշում է նաև, որ Վոլգյորեն Տեքստիլ Ինշաաթ Գիդա Տիջարեթ վե Սանայի Լիմիթիդ Շիրքեթի թուրքական ընկերության անբարեխիղճ գործունեությունը հանգեցրեց նրան, որ Duck and Cover Clothing Limited (GB) ընկերությունը սկսեց լայնածավալ գործունեություն՝ ուղղված ընկերության ապրանքային նշանների նկատմամբ իր օրինական իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես, տարբեր երկրներում նախաձեռնել է համապատասխան քայլեր՝ հակադրված նշանի միջազգային գրանցումներն անվավեր ճանաչելու համար, ինչի արդյունքում որոշ երկրներում այդ նշանների գործողությունը արդեն դադրեցված է:

Այսպիսով, բողոքարկողը համարում է, որ հօգուտ հայտարկված նշանի գրանցման առկա են բավականաչափ փաստարկներ, և, ելնելով վերը նշվածից, ինչպես նաև բողոքին կից ներկայացված փաստաթղթերից, խնդրում է IR 870734 միջազգային գրանցմամբ «Duck and Cover» ապրանքային նշանին տրամադրել իրավական պաշտպանություն:

Բողոքին կից ներկայացվել է թվով 21 փաստաթուղթ, այդ թվում, «Duck and Cover» (IR 870734) հայտարկված նշանը Duck and Cover Clothing Limited (GB) ընկերությանը պատկանելու հիմնավորումներ, հայտարկված նշանի համատարած ակտիվ օգտագործումը հաստատող փաստաթղթեր, հայտարկված նշանի գլոբալ առաջխաղացման վրա ուղղված՝ հայտատուի լայնամասշտաբ գովազդային կամպանիայի ապացույցներ, մի շարք երկրներում հակադրված նշանի գրանցումը անվավեր ճանաչելու վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև Duck and Cover Clothing Limited (GB) ընկերության կողմից Թուրքիայում նախաձեռնած՝ հակադրված նշանի սեփականատիրոջ ազգային գրանցումներն անվավեր ճանաչելու դատաքննության վերաբերյալ փաստաթղթեր, որոնց

թվում է նաև IR860239 միջազգային գրանցման համար բազային գրանցում հանդիսացող No.2003/02897 ազգային հայտը, և բողոքին վերաբերող այլ փաստաթղթեր:

2009թ. մայիսի 29-ին Duck and Cover Clothing Limited (GB) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանը բողոքարկման խորհուրդ նամակ է ներկայացրել՝ Թուրքիայում հակադրված նշանի բազային գրանցումը անվավեր ճանաչելու գործով դատական նիստը մինչև 2009թ. հուլիսի 1-ը հետաձգելու հետ կապված՝ IR 870734 միջազգային գրանցմամբ «Duck and Cover» ապրանքային նշանի վերաբերյալ բողոքի քննարկումը հետաձգելու խնդրանքով, ինչն հաշվի առնելով բողոքարկման խորհուրդը բողոքի քննարկումը նշանակել է 2009թ. հուլիսի 29-ին:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

1. ելնելով կարգի 9393-րդ կետի պահանջներից, օրենքի 12-րդ հոդվածի 1--ին մասկետին համապատասխան նույնական կամ շփոթելու աստիճան նման նշանների որոնումը կատարվել է այն նշանների մեջ, որոնք «2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններ են» և արդյունքում հայտնաբերվել է VOLGƏREN TEKSTƏL INŞAAT GIDA TƏCARET VE SANAY LƏMƏTED ŞƏRKETƏ (TR) ընկերության անունով ԱԾՄԴ 25-րդ դասում գրանցված «DC DUCK AND COVER» (IR860239) ապրանքային նշանը:

2. Փորձաքննությունը՝ կարգի 103-րդ կետի 6-9 ենթակետերին համաձայն հայտարկված «Duck and Cover» (IR870734) և «DC DUCK AND COVER» (IR860239) ապրանքային նշանների նմանությունը որոշելիս, պարզել է նաև, որ նշանները շփոթելու աստիճան նման են, քանի որ նշաններից մեկը ընդգրկված է մյուսի մեջ և մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի,ընկալման զգացողություն:

3. Ելնելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներից, այն է. «1. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝ բ) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին:», բողոքարկման խորհուրդը համարում է, որ «Duck and Cover» IR 870734 ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ԱԾՄԴ 25-րդ

դասում նշված բոլոր ապրանքների նկատմամբ մերժման մասին կրկնական փորձաքննությունը որոշումը կայացվել է օրենքի և կարգի պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով, որ բողոքի հետ կապված որևէ նոր հանգամանքներ ի հայտ չեն եկել, բողոքարկման խորհուրդը՝ ելնելով բողոքի հիմնական պահանջի ձևակերպումից, գտնում է, որ բողոքում և դրան կից ներկայացրած փաստաթղթերում՝ այլ երկրներում «DC» IR 870734 ապրանքային նշանի ճանաչված լինելու և լայնածավալ օգտագործման հետ կապված փաստացի հանգամանքները, ինչպես նաև նշանի գործողությունը մի շարք երկրներում դադարեցնելու վերաբերյալ ապացույցները գործակալության փորձաքննության որոշումը վերանայելու հիմք լինել չեն կարող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքերի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Duck and Cover Clothing Limited (GB)) ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2009թ. մայիսի 11-ի բողոքը և 2008թ. նոյեմբերի 10-ի IR 870734 միջազգային գրանցմամբ «Duck and Cover» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան